Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՈԿՏՅԱԲՐԻՆԱ ՎԱՐՈՍՅԱՆ

Ам-304

# ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀՍԿԱՆԵՐԸ



«ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ» 1933

Арм.
3-2956а
3-2956а
891.981

ՈԿՏՅԱԲՐԻՆԱ ՎԱՐՈՍՅԱՆ

# ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀՍԿԱՆԵՐԸ

А $\frac{II}{35581}$
Г.П.Б. в Лнгр.
Ц. 1933 г.
Акт № 519
Инв. № 21943

1933

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»

ՀՆԳԱՄՅԱԿԻ
ՀՍԿԱՆԵՐԸ

КНИГОИЗДАТЕЛЬСТВО
„СЕВЕРНЫЙ КАВКАЗ"

## ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀՍԿԱՆԵՐԸ

*Մեր Սուրիկը, պուճուրիկ,*
*Մազերը սև խուճուճիկ.*
*Գիշեր ցերեկ անդադրում*
*Քարտեզներ է նա կարդում։*
*Իսկ պարտեզում Համիկը,*
*Ծույլ Նունիկն ու Սամիկը,*
*Եվ Օննիկն ու Սոնիկը,*
*Վազվզում են ու խաղում.*
*Ծափ են տալիս Թռչկոտում,*
*Պատուհանին մոտենում*
*Ու Սուրիկին դուրս*
*կանչում։*
*—Սուրիկ, Սուրիկ, դուրս*
*արի,*
*Արի խաղընկեր*
*դառի,*
*Մեկտեղ խաղանք մենք*
*լախտի.*
*Տեսնենք թե ով*
*կհաղթի...*
*Մեր Սուրիկը դուրս*
*չեկավ*
*Քարտեզն իսկույն*
*վայր դրավ,*
*Պատուհանին մոտ*
*յեկավ*



Սուրենը դիտում է քարտեզը

—Ռոնիկ, Սոնիկ հեյ,
տղերք,
Խաղը թողեք, յեկեք
ներս,
Նոր խաղ պետք է
ցույց տամ ձեզ։
Յեվ Ռոնիկն ու Սոնիկը,
Ել Համիկն ու Ջոնիկը,
Մանիկ, Նունիկ,
Կիմիկը
Շարվեշարան ներս
մտան.
Բարեվ տվին ու
նստան,
Սպասում են անհամբեր,
Մեր Սուրիկի պատմության։
Մեր Սուրիկը լրջացած,
Փայտը քարտեզին
ուղղած...
Դե, յերեխեք, նայեցեք
Ուշի ուշով հետեվեք
Ինչեր պետք է ցույց տամ
ձեզ...
Վոր արմանաք, զարմանաք
Տեսածներից հիանաք։
Յերեխեքը բերնաբաց
Վոնց են նայում զարմացած։
—Դե շուտ արա սկսի
Ել չենք կարող համբերի
Յեվ Սուրիկը միշտ զգաստ
Ասաց պատմեց
ցույց տվեց
Բանվորների գործը
մեծ,



Տարվեցարան ներս մտան

Նրանց ձեռքով
կառուցված,
Հսկաներին բարձրաբերձ
Վորոնք ծաղկել են
Այսոր,
յերկրի կենտրոններում
Խոր ձորերում, լեռներում,
Դաշտերում լայն ու
արձակ,
Խորհրդային մեր
յերկրում
Բոյ են քաշել համարձակ։
Ցեվ ինչ տեսան
Ռոնիկը,
Ջոնիկ, Մանիկ,
Սոնիկը։
Ահա հսկա Դոնբասը,
Ցուրտ Սիբիրն ու
Կուզբասը,
Վորոնց կուրծքն են
ճեղքում
Բանվորները յեռանդով
Ու քարածուխ են հանում
Չե՞ վոր առաջին
Հնգամյակում,
Մեր յերկիրն իննսուն
միլիոն տոնն
Քարածուխ ե պահանջում։
Մին էլ ահա փո՜ւֆ, հա փո՜ւֆ
Շոգեկառքն ե մոտենում,
Վագոնները լեփ-լեցուն —
Քարածուխով բեռնված
Գնացքներն են սլանում։
Մեր Սուրիկը խանդավառ



Ածխային գի չանքները

Ուրախ դեմքով
ժպտերես
Փայտը առաջ շարժելով
Մոսկովի վրա
դրեց։
Եվ ի՜նչ տեսան
Մոսկովը,
Մեր Միության
կենտրոնը
Իսկ Մոսկովում ինչե՜ր
կան...
Գործարաններ շար և
շար,
Ֆաբրիկաներ ամեն
ուր,
Տեսեք ավտո գործարան
Տաս րոպեն մի անգամ
Պատրաստ ավտո
մեքենան.
Դուրս են գալիս շար և
շար.
Վոլորուն փողոցներով
Սլանում են վեր ու
վար..
Հետո տեսան
Կրեմլը,
Պարիսպներով բարձրաբերձ
Բոլշեվիկյան քաղ
բյուրոն է
Գտնվում նրա մեջ։
Բանվորների առաջնորդ
Բոլշեվիկյան մեծ
գործիչ,
Ընկեր Ստալինն է այնտեղ




Մոսկվան իր ավտոներով

Ղեկավարող և հսկիչ։
Գիտե՛ք անչափ
Տոկուն է
Կամքը նրա մարտական,
Բոլշևիկ է աննկուն
Ջերմ աշակերտ
Լենինյան
Առաջնակարգ հարվածային՝
Խորհրդային Միության։
Լավ սովորենք,
յերեխեք,
Մենք էլ դառնանք
Լենինիստ,
Վոր փոխարինենք
նրան։
Հետո տեսան արձանը,
Մովզոլեյը Լենինի
Փողոցները վոլորուն
Վորոնք ուղղվում են
հիմի
Բյուր բանվորներ են
աշխատում
Հազար գույնի ռանգլի
Հայ, թուրք, ռուս
վրացի,
Թե պարսիկ, թե
չինացի
Բոլորն էլ ջերմ
ընկերներ
Նվիրված են մեծ
գործի։
Յերեխեքը զարմացած,
Աչքերը չորս
բերնաբաց



Տրակտորն իր ստեղծողներով

*Վո՜նց են նայում*
*հրհրում,*
*Ծափ են տալիս*
*Թռչկոտում,*
*Ո՜նիկ, Սո՜նիկ, մի*
*կանչի*
*Սուրիկ, շուտ առաջ*
*անցի։*
*Մեր Սուրիկը խանդավառ,*
*Փայտը ձեռքին*
*անդադար,*
*Քարտեզի վրա շարժելով*
*Փայտն ուղղեց նա*
*Խարկով։*
*Ու լիաթոք, ժպտերես*
*Թռչկոտելով նա*
*գոչեց.*
*—Ահա Խարկովի*
*հսկան*
*Գործարանն ականավոր,*
*Տրակտոր է շինում*
*նա*
*Ու այդ պողպատյա մեր*
*ձին,*
*Տրակտորիստն էլ*
*ու սին,*
*Սլանում են շարե*
*շար։*
*Ցերկրի ամեն կողմերը*
*Վարում կոլխոզի արտերը*
*Կուլակ Պետոն ու*
*Սեթոն,*
*Վո՜նց են ընկել քարե*
*քար.*



Սելմաշ (Ռոստովում)

*Վա՜յ խափանիչի*
*մաշինը*
*Ու սև լինի են*
*որը*
*Եվ վոնց փրկենք մեր*
*կաշին*
*Բոլորել են մեր*
*չոլը*
*Սեթո, ինչպե՞ս թաքցնենք*
*Եդ «կղկղան» աքլորը*
*Վոր չվարի, չորանա*
*Կոլխոզական եդ չոլը։*
*Իսկ տրակտորները*
*գրընգուն*
*Սլանում են շարե*
*շար,*
*Կոլխոզական դաշտերով*
*Վարում, հերկում, հող ու*
*քար։*
*Խարկովից նա դուրս*
*գալով*
*Ձեռքն առաջ,*
*շարժելով,*
*Փայտն ուղղեց դեպ*
*Ռոստով.*
*Ռոստովում ինչեր*
*տեսան*
*Ահա Սելմաշը հսկա*
*Հպարտ ցեխերն է*
*փռել*
*Երեսուն և հինգ*
*հեկտար*
*Տափարակ դաշտի*
*վրա։*

*Մեր գյուղերին*
*տալիս է*
*Տարեկան յոթ հարյուր*
*հազար*
*Կալսիչ, հնձիչ, ու*
*կոմբայն*
*Գյուղի համար*
*մեքենա։*
*Հետո գնաց Դոն*
*գետով*
*Նա շատ յերկար*
*պտըտվեց․*
*Ազովի ծովն անցավ*
*Նա վոլորուն ճամբեքով*
*Կասպից ծովին*
*մոտեցավ,*
*Այդ յերկուսի մեջ*
*տեղը*
*Մանիչի դաշտը*
*գտավ։*
*— Ինչ յերկար է,*
*յերեխեք*
*Այս ճամբեքը, լավ*
*նայեք,*
*Ինչքան ծախսեր պիտ*
*անենք,*
*Այս վոլորուն ճամբեքով*
*Մինչև վոր ապրանք*
*տանենք...*
*Մեկ տեղից մինչև*
*մյուսը։*
*Ու Սուրիկը մտածեց,*
*Ցուցամատը պինդ*
*կծեց,*

— Հա՛, հիշեցի, յերեխեք,
Վորոշումը մարտական
Ազով ծովը Դոն գետով
Պիտ միանա Կասպիցին
Կուբան գետն ու
Թերեքն էլ,
Պետք է լինեն նրանց
ձին.
Ու մի հսկա ջրանցքով
Պիտի կապեն յերկուսին։
Այն ժամանակ Մանիչը...
Ու Սուրիկը ժպտադեմ
Այստեղ նորից կանգ
առավ,
Նրա աչքերի առջև
Լայն ու արձակ ու
տոչոր
Մանիչյան դաշտը
փռվավ...
Յեվ նա տեսավ կուռ
շարքեր,
Լեռն են ճեղքում
յեռանդով.
Ճեղքում, տանել են
քանդում,
Վոր ջուրն հոսի
ջրանցքով,
Յեվ նա տեսավ շատ
նավեր
Ապրանքներով բեռնված
Ջուրը ճեղքում են
անցնում
Ազով ծովից, Կասպից
ծով։

A 35581



Բաքուն իր նավթի վիշկաներում

Սուրբիկն ուրախ ծափ
տվեց,
Փայտը նորից ձեռքն
առավ,
Ուրախ դեմքով ժպտերես
Շարունակեց իր
ճամբան։
Կապույտ ծովից դուրս
յեկավ
Ադրբեջանյան ափերով
Նա Բաքվին
մոտեցավ։
— Պահ մի նայեք, ի՞նչ է
սա...
Վիշկաների խիտ անտառ,
Նավթահորեր անհամար
Գետնի կուրծքն են
պատառել
Ու դուրս ժայթքել
խորքերից,
Ու նորից են դուրս
ժայթքում
Գրոզնիյից, Մայկոպից։
— Նավթից գիտե՞ք
Յերեխեք,
Պատրաստում ենք
կերոսին,
Սև-սև մազութ ու
բենզին,
Յեթե չունենանք
բենզին,
Ոդանավը չի թռչի,
Ավտոն իսկույն կանգ
կառնի։



Դնեպրոգէս

Թե չլինի կերոսին,
Տրակտորը չի
վարի,
Իսկ մազութը հո
գիտեք,
Որ վառվում է
ինչպես յեղ...
Նավթից ամբողջ աշխարհում
Յերկրորդ տեղն ենք գրավում
Առաջին հնգամյակում
Նավթի պլանը հիշում եք
Կատարեցինք յեռանդով
Միայն յերկու և կես
տարում։
Սուրիկը վոգևորված
Թռչկոտում եր հետ առաջ.
Հա տեղերն եր
շփոթում,
Ու ցույց տալիս ձախից
աջ։
—Ո՛, մի նայեք, մի նայեք
Դնեպրոգեսը հաղթական,
Մեր Միության մեծ
հսկան
Մեր Միության մեծ
պարծանք
Նենգ թշնամուն սարսափ
վախ։
Ալիքներով վարարուն
Մեր Դնեպրը նորաշեն
Ութը հարյուր տաս
հազար
Ձիաուժ տուրբիններ
Վոլորում է պտտում։



Մագնիտագորսկն իր ձուլարաններով

*Մեր գյուղերն ու*
*հողերը*
*Լույսով պետք է*
*վողողվի,*
*Մրոտ նավթի*
*ճրագը*
*Թող չքանա ու*
*կորչի.*
*Վոր ամեն տեղ*
*ամեն ուր,*
*Իլիչի ճրագը*
*վառվի,*
*Հաղթանակի վեհ*
*գովքով*
*Նրա պատգամը արի։*
*Գնացքները պիտ*
*շարժվեն*
*Ելեկտրական հոսանքով*
*Գործարաններն աշխատեն*
*Այդ հոսանքի մեծ*
*զարկով։*
*Բա Վոլխովը,*
*Դոնգեսը,*
*Զորագեսը, Ձագեսը,*
*Դրանց ուժին*
*այսօրվա*
*Թող թշնամին փորձի*
*մոտ գա...*
*Մագնիտոգորսկն*
*Ուրալում,*
*Յեվ Կուզբասը*
*Սիբիրում.*
*Վորտեղ դոմնաներ*
*հրկեզ*



Թուրքսիբի հին յեվ նոր ճանապարհը

Պեծ-պեծում են մի
տես, տես,
Ածուխ, յերկաթ են
հալում,
Ու հալոցքից յերկաթի
Մեզ պողպատ են
պատրաստում։
— Իսկ պողպատը
յերեխեք,
Մեր յերկրին շատ է
պետք․
Յեթե պողպատ չունենանք,
Առանց մաշին կմնանք։
— Ո՜, Թուրքսիբը են է, հա՛
Յերկաթ գիծը վոլորուն,
Ուր անապատ եր
առաջ․
Այսոր գնացք է
սլանում
Առաջ ուղտի քարվաններ
Վորոճալով յերերուն
Դանդաղ ճամբա յեր գնում
Այսոր գնացքի ձայնից
գազանները սարսափած
Դեպի վորջերն են
փախչում։
Իսկ գնացքը փուհ, հա, փուհ
Ցուրտ Սիբիրից Թուրքեստան,
Հաց ու չոր փայտ է
տանում.
Թուրքեստանից ցուրտ
Սիբիր
Ճերմակ բամբակ է
բերում։

Հետո անցան շատ դաշտեր
Ու մոտեցան Կովկասին
Տեսան շատ շատ սովխոզներ
Կոլխոզական լայն
դաշտեր...
Սուրբին այստեղ խիստ
հուզվեց
Ու Կուբանը ցույց
տվեց.
— Այս անպիտան Կուբանը,
Չկատարեց պլանը,
Ջախջախված է
կուլակը
Բայց խնամին
աղվեսը
Դեռ գործում է սուս ու
փուս
Ու ման գալիս կուզե
կուզ.
Շատերին է համոզում
Ու իր թևի տակ
քաշում
Որ բերքը չհավաքվի,
Ու պլանը մեր
խորտակվի...
— Իսկ լենինյան բանակը
Վրա բերեց Արշակը
Ո՞վ կուռ է մեր
կռնակը...
Ամեն մի նոր նվաճում
Մեր խորամանկ
թշնամուն
Սարսափ ու վախ է
ազդում.

Իսկ թշնամին վոնց
մողես,
Պոչը կտրած, բայց
աղվես.
Մեր բարձրունքներն է
թռչում,
Վոր անցքերից ներս
սողա
Մեր ամեն մի
կառուցման
Հիմքը քանդի, վնաս
տա։
Բայց լենինյան
բանակը,
Միշտ պատրաստ ու
անհաղթ է...։
Սուրիկը վերջացրեց,
Ձեռքի փայտը ցած
դրեց։
— Ապա տեսանք
յերեխեք
Բոլշեվիկների որով
Բանվորների կուռ
բազկով
Ինչեր ենք մենք
ստեղծել
Վեհ հսկաներ
կառուցել։
Յերկրորդ հնգամյակում
Մեր առաջ խնդիր է
դրվում
Կառուցված տեխնիկային
Տիրապետենք լիովին։
Կոլխոզնիկին, բանվորին,



Ապագայի կառուցողները

*Հմուտ դարձնենք իր*
*գործին*
*Դաստիարակենք*
*մասսային*
*Հղկենք, կոփենք, նոր*
*կյանքով*
*Հարվածելով թշնամուն,*
*Առաջ անցնենք*
*պայքարով․*
*Անդասակարգ համայքներ*
*Կառուցելու վեհ*
*թափով։*
*Յերեխեքն ուրախացած*
*Բոլորեցին Սուրիկին,*
*Ու բոլորը միասին*
*Լսեք, ինչ վորոշեցին։*
*Սուրեն յելավ աթոռին*
*Ու հարց տվեց*
*բոլորին։*
*— Ո՞վ, ինչ է ուզում*
*դառնալ…*
*Ոնիկն ասաց*
*ոդաչու,*
*Ջոնիկն ուզեց*
*ինժեներ*
*Մանիկն ասաց յես*
*տեխնիկ,*
*Իսկ Արշակը տրակտորիստ,*
*Համիկն ուզեց*
*նավաստի,*
*Իսկ Սոնիկն ուսուցչուհի*
*Վոր նոր կադրեր պատրաստի…*
*Սուրիկն, Ոնիկն ու*
*Ջոնիկ,*

Արշակ, Սոնիկն ու
Մանիկ,
Վողջ քարտեզը
յեռանդով,
Նրանք իսկույն
սերտեցին,
Խորհրդային մեր
յերկրի,
Չորս բոլորը
շրջեցին։
Այնքան հսկաներ
տեսան
Բարձրաբերձ ու
հաղթական.
Բանվորների վեհ
թափով
Ու կուռ բազկով
կառուցված,
Վոչ վոք մեզնից չեր
լսել,
Յեվ չեր տեսել
անցյալում
Արքաների բռնակալ
Սեվ ու դաժան
կարգերում։
Բուրժուաների արնաքամ
Շահագործող յերկրում,
Խորհրդային մեր
յերկրի
Նման հսկա կառուցում...
Այսոր կրկին նրանց
մոտ
Հալածանք ե ու
ճնշում,

Համատարած ճգնաժամ
Գործարանում, ֆաբրիկում,
Բյուր բանվորներ
Առանց գործ
Սովամահ են թափառում.
Նրանց յերկրում
Անկում ե,
Դեպի անդունդն ե
գլորվում...
Իսկ մեր յերկիրն,
որեցոր
Բարձրանում ե ու
ծաղկում...
Մանկիկները՝ մեր
Ցնծուն
Թռչկոտելով զալարուն
Ցերգ ու ծափով
խնդագին՝
Խոսք տվեցին
իրարու
Լինել ուսյալ
գիտակից,
Հարվածային
պիոներ,
Ու յերդվեցին
«Միշտ պատրաստ»
Ամբողջ կյանքով
նվիրվել
Մեր յերկրի պողպատյա
Հսկաներին պաշտպանել։

---

От. редактор
А. Г. Авакьян
Тех. редактор
Г. М. Маркарьян

3166
Ах—15у

Сдано в набор 5|IV 33 г.
Сдано в печать 25|IV 33 г,
Об'ем 2 печ. листа
Тираж 1500 экз,

Уполкрайлита № Б—181 ГКТОККПО—с-Ф А 5 148х210—Зак.№ 1654 Ростов н-Д

[illegible]

| Եջ | Տողեր | Տպված է | Պէտք է կարդալ |
|---|---|---|---|
| 7 | 7 ներքևից | Բարձրաձայն և պահանջում | Բարձրաձայն էր պահանջում |
| 15 | 17 » | Կոլխոզայնական դաշտավարում | Կոլխոզայնական դաշտերը |
| 15 | 16 » | Վարում եղեկում եղ ու քար | Վարում եղեկում անդաստար |
| 35 | 13 » | Դանդաղ համքը կը գնում | Դանդաղ համքը եկեն գնում |

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220035581

От. редактор
А. Г. Авакьян
Тех. редактор
Г. М. Маркарьян

3166
Ах—15у

Сдано в набор 5 IV 33 г.
Сдано в печать 25 IV 33 г.
Об'ем 2 печ. листа
Тираж 1500 экз.

Уполкрайлита № Б—181 ГКТОККПО—с-Ф А 5 148x210—Зак. № 1654 Ростов н-Д

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220035581

ОКТЯБРИНА ВАРОСЯН

# ГИГАНТЫ ПЯТИЛЕТКИ

20022
А II 35581

ԳԻՆԸ 70 ԿՈՊ.
Цена 70 коп.

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“
ԳՐԱՊԱՀԵՍՏԸ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ, ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ. 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)